

ՆՈՐԱՍՈՒՅԱԿԱՆ ՁԵՆՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԸ

Ներկայումս ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման գլխավոր բանաձևերից մեկը՝ ակտիվ նորամուծական ռազմավարության իրականացումն է:

Շուկայական տնտեսության պայմաններում յուրաքանչյուր երկրի տնտեսության արագ տեմպերով զարգացման կարևոր գործոն է նորամուծական ձեռնարկատիրությունը: Վերջինս առևտրային գործունեության յուրահատուկ տեսակ է, որի նպատակն է շահույթ ստանալ՝ տնտեսության տարբեր ոլորտներում նորամուծությունների ստեղծման և դիֆուզիայի շնորհիվ: Ի տարբերություն դասական վերարտադրական ձեռնարկատիրության՝ նորամուծականը հենվում է գործող ձեռնարկությունների զարգացման նոր ուղիների որոնման (նոր արտադրանք, նոր շուկաներ և այլն) կամ նոր՝ նորամուծական կողմնորոշում ունեցող ձեռնարկությունների ստեղծման վրա: Նորամուծությունը ձեռնարկատիրության յուրահատուկ գործիք է: Այն հանդես է գալիս որպես նորությունների նպատակաուղղված, ծրագրավորված, կազմակերպված որոնում, և դրանց կենտրոնացում ձեռնարկատիրական տարբեր կառույցներում:

Շուկայական տնտեսավարման պայմաններում առանձնակի կարևոր նշանակություն ունի փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) սուբյեկտներում նորամուծական գործընթացների կազմակերպումը, որը նպաստում է տեղական արտադրանքի մրցունակության բարձրացմանը, ՓՄՁ սուբյեկտների կողմից գիտատեխնիկական արդյունքների արդյունավետ օգտագործմանն ու նրանց արտահանման ներուժի ընդլայնմանը: Այսպիսի հարցադրում կատարվում է ՀՀ կառավարության տարբեր փաստաթղթերում, որոշումներում: Այսպես օրինակ, նորամուծական զարգացման հայեցակարգում ամրագրվում են կառավարության հիմնական մտտեցումները՝ նորամուծական ձեռնարկատիրության նկատմամբ: «Գիտական մշակումների ներդրման առավել արդյունավետ ճանապարհն անցնում է համեմատաբար փոքր ծախսերով և կարճ ժամկետում մրցունակ արտադրանք մշակելու ընդունակ նորամուծական ֆիրմաների ցանցի միջոցով: Նորամուծական ձեռնարկատիրության զարգացումը հնարավորություն կտա շուկայական բարեփոխումների և տնտեսության աշխուժացման գործընթացում ներգրավել գիտատեխնիկական ներուժը»¹:

Փոքր և միջին ձեռնարկատիրությունը նշանակալի դեր է խաղում երկրի համախառը ներքին արդյունքի ձևավորման գործում. ըստ 2008թ. տվյալների ՓՄՁ-ի տեսակարար կշիռը ՀՀ ՀՆԱ-ում կազմել է ավելի քան 40%: Նույն ժամանակահատվածում ստեղծվել է ավելի քան տասը հազար նոր ՓՄՁ սուբյեկտ (շուրջ 14,5 հազար նոր աշխատատեղով): ՀՀ-ում որպես ընդհանրական(ազդեցացված) տնտեսական ցուցանիշ, ըստ ՄԱԿ-ի մեթոդաբանության ՓՄՁ-ի զարգացման ինդեքսը կազմել է 237,2, ինչը 2002թ. համեմատ ավելացել է շուրջ չորս անգամ²:

ՓՄՁ հետագա զարգացումը զգալի թվով նոր աշխատատեղեր կստեղծի՝ կրճատելով ընդհանուր տնտեսական պարբերաշրջանի անկման փուլի հետևանքով առաջացած պարբերական գործազրկությունը: Ձեռնարկատիրության զարգացումը երկրում անմիջականորեն կազդի բնակչության լայն խավերի դրամական եկամուտների աճի վրա՝ բարձրացնելով նրանց վճարունակությունը: Կենսունակ ՓՄՁ հատվածի զարգացման համար նախապայման է բարենպաստ մակրոտնտեսական միջավայրի առկայությունը, վերահսկվող գնաճը, առողջ մրցակցային միջավայրի առկայությունը և մի շարք այլ պայմաններ:

¹ ՀՀ ինովացիոն գործունեության հայեցակարգ. ՀՀ կառավարության 2005թ. հունվարի 30-ի N2 նիստի արձանագրային որոշում:

² ՀՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 8-ի N1437-Ն որոշման հավելված «Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2008թ. ծրագիր»

Նորամուծական ձեռնարկատիրության աջակցության նպատակով իրականացվող միջոցառումների արդյունավետության բարձրացման տեսանկյունից անհրաժեշտ է հստակեցնել նորամուծությունների և նորամուծական գործունեության կազմակերպման ու կարգավորման մի քանի ելակետային դրույթներ:

Ձարգագած երկրների փորձը վկայում է, որ նորամուծական ձեռնարկատիրության հիմնական սկզբունքներն են.

1. նորամուծությունները սկսվում են հնարավորությունների վերլուծությունից,
2. նորամուծական գործունեությունը պահանջում է համապատասխան հայեցակարգ,
3. նորամուծական նախագծերը պետք է լինեն հստակ ձևակերպված, ընդունելի, արդյունավետ և կատարման ենթակա,
4. նորամուծություններն ուղղված են առաջատար դիրքերի ձեռքբերմանը:

Նորամուծական ձեռնարկատիրությունը հաճախ հնարավորություն է տալիս բացահայտել այն տնտեսավարող սուբյեկտները, որոնք կազմում են տվյալ տնտեսության հատուկ ոլորտը և պահանջում պետական աջակցություն, կարգավորման և կառավարման որոշակի մոտեցումներ: 'Դրանով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում ձևավորել փոքր նորամուծական ձեռնարկություններ (ՓՆՁ), որպես նորամուծական գործունեության կազմակերպման հատուկ ձև:

ՓՆՁ-ները կարող են լինել տարբեր կազմակերպային կազմակերպական տեսակների, որի ընտրությունը կախված է գիտատեխնիկական ուղղությունների բնույթից և մասշտաբներից, ինչպես նաև նորամուծական գործունեության իրականացման համար անհրաժեշտ այլ առանձնահատկություններից:

ՓՆՁ-ների տարբերությունը բնութագրվում է նաև երկու խումբ հատկանիշներով: 'Դրանք են՝

1. ՓՆՁ-ների նպատակային գործառույթները արտահայտող հատկանիշներ,
2. ՓՆՁ-ների կազմակերպական ձևերի վրա ազդող հատկանիշներ:

Առաջին խմբում հատկանիշները ներառվում են ըստ գիտության և արտադրության համակցման բնույթի (գիտական, արտադրական, գիտաարտադրական), ըստ գիտաարտադրական գործընթացի փուլերի թվի (միափուլ, բազմափուլ), ըստ գիտաարտադրական գործընթացի բնույթի (անընդհատ, ընդհատ կամ դիսկրետ):

Երկրորդում հատկանիշները խմբավորում են ըստ սեփականատերերի թվի (անհատական, կոլեկտիվ), ըստ արտադրական պրոֆիլի (մասնագիտացված, դիվերսիֆիկացված), ըստ գտնվելու վայրի:

Նորամուծական ձեռնարկատիրությունը ենթադրում է նորամուծության տարբեր ձևեր՝ արտադրանքի, տեխնոլոգիական և սոցիալական: Արտադրանքի նորամուծությունը դառնում է ձեռնարկության ներուժի կուտակման և լրացման միջոց, որն ապահովում է կանխատեսվող շահույթի ծավալի և շուկայական մասնաբաժնի մեծացում: Տեխնոլոգիական նորամուծությունը արտադրական, գիտատեխնիկական ներուժի համալրման գործընթաց է, որն ապահովում է աշխատանքի արտադրողականության բարձրացում, էներգիայի, հումքի, նյութերի և այլ ռեսուրսների տնտեսում և հետևաբար հնարավորություն է տալիս մեծացնել պլանավորվող շահույթի ծավալը: Սոցիալական նորամուծությունների կիրառությունը ընդլայնում է աշխատուժի շուկայի հնարավորությունները:

Ազգային տնտեսությունում ՓՆՁ-ները արտադրական գործընթացների արդյունավետությունը բարձրացնող և ապրանքների ու ծառայությունների մրցունակությունը ապահովող միջոց են: 'Դրանք նպաստում են ինչպես պահանջարկի, այնպես էլ առաջարկի փոփոխությունների կարգավորմանը՝ հենվելով գիտատեխնիկական, փորձակոնստրուկտորական աշխատանքների առևտրային միտումների ավելացման վրա:

Եվրոպական տնտեսական գոտում աշխատատեղերի 2/3-ը ապահովում են փոքր ձեռնարկությունները, տալով ՀՆԱ-ի 40-60%-ը: ՓՄՁ-ի ոլորտի զարգացումը հնարավորություն է տալիս մեղմել անցումային տնտեսություններին հատուկ տնտեսական և սոցիալական դժվարություն-

ները՝ կայուն պայմաններ ստեղծելով հետագա տնտեսական աճի համար: ՓՄՁ-ի գործունեության ռիսկը պայմանավորված է գործունեության ոլորտի, ճյուղի առանձնահատկություններով և այն տնտեսական ակտիվներով, որով կազմակերպությունը պատրաստվում է իրականացնել նորամուծություններ:

Փոքր նորամուծական ձեռնարկատիրության կայացման գործում ելակետային ու հիմնարար դեր են կատարում դրան աջակցող նորամուծական ենթակառուցվածքները, որոնք կարելի է ներկայացնել երեք գործառութային խմբերով.

1. ՓՄՁ-ի սպասարկման և աջակցման մասնագիտացված կազմակերպություններ,
2. ՓՄՁ-ի ձևավորման ու ստեղծման կենտրոններ ,
3. Նորամուծական ձեռնարկատիրության գոտիներ:

Չարգացած երկրներում ժամանակակից գիտատեխնիկական քաղաքականության արդյունավետությունը որոշվում է ոչ միայն նորամուծական ոլորտում հիմնական գերակայությունների սահմանմամբ, այլև փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության կարգավորման ճկուն մեխանիզմների ձևավորմամբ, որը կարող է հաղթահարել մենաշնորհի կազմակերպատնտեսական թերությունները, որոնք բացասական ազդեցություն են ունենում նորամուծական գործունեության վրա: Ըստ ԱՄՆ Ազգային գիտական հիմնադրամի հաշվարկների, նորամուծական գործունեությունում ներդրված յուրաքանչյուր դոլարով միջինը 100 աշխատող ունեցող ֆիրմաներում իրականացվել են 4 անգամ ավելի նորամուծություններ, քան այն ֆիրմաներում, որոնք ունեն մինչև 1000 աշխատող, և 24 անգամ ավելի շատ, քան այն ֆիրմաներում, որտեղ զբաղված են 100-ից ավելի մարդ: Ընդ որում նոր շուկա դուրս գալու համար, փոքր ֆիրմաներին պահանջվում է 2,22 տարի, խոշոր ֆիրմաներին՝ 3, 05 տարի¹:

Չնայած գիտատեխնիկական ներուժի զգալի մասը կենտրոնացած է խոշոր ընկերություններում, այդուհանդերձ փոքր և միջին ձեռնարկությունները գրեթե միշտ դրանցից առաջ են անցնում գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների արդյունքների առևտրայնացման հարցում: Տարբեր ուսումնասիրություններ վկայում են, որ գրեթե բոլոր զարգացած երկրներում փոքր և միջին ձեռնարկություններն ապահովում են մույն չափի տեխնոլոգիական նորամուծություններ, որքան խոշոր ձեռնարկությունները: Փոքր և միջին ձեռնարկությունների հաջողությունը այդ բնագավառում պայմանավորված է հետևյալով.

- Գիտական հետազոտություններում մասնագիտացման խորացումը հասցնում է նրան, որ փոքր ձեռնարկությունները կարողանում են մրցակցել խոշորների հետ, աշխատելով նեղ մասնագիտացված ուղղություններով, նույնիսկ սահմանափակ ֆինանսական ռեսուրսների պայմաններում:
- Փոքր ձեռնարկությունները զբաղվում են նորամուծական նախագծերի իրացմամբ այն ոլորտներում, որոնք խոշոր ձեռնարկությունների համար ոչ հեռանկարային են կամ չափազանց ռիսկային: Ի տարբերություն խոշորների՝ փոքր ձեռնարկությունները մեծ ջանասիրությամբ զբաղվում են շուկայում պահանջվող յուրահատուկ նորամուծությունների մշակմամբ և յուրացմամբ:
- Խոշոր ձեռնարկություններում, որպես կանոն, նոր գիտական արտադրանքի մշակմամբ, ներդրմամբ, արտադրությամբ և իրացմամբ զբաղվում են առանձին մասնագիտացված ստորաբաժանումներ: Դրա արդյունքում, յուրաքանչյուր փուլում պատասխանատվությունն անցնում է մի խմբից մյուսին, իսկ փոքր ձեռնարկություններում նորամուծական գործընթացի բոլոր փուլերը միավորվում են մեկ անձի ղեկավարության ներքո, որն արագացնում է նորամուծական գործունեության վերջնական արդյունքի ստացումը:
- Փոքր և միջին ձեռնարկությունների արտադրական գործունեությունը ենթադրում է միջոցների և ջանքերի կենտրոնացում, ինչպես նորամուծությունների ստեղծման փուլում, այնպես էլ դրա տարածման սկզբնական շրջանում: Դա նշանակում է, որ փոքր

¹ Национальные инновационные системы в России и ЕС, Москва, 2006, Под. ред.: В. В. Иванова и др.

ձեռնարկության նպատակն է հասնել ապրանքի բարձր տեխնիկական, տեխնոլոգիական մակարդակի ձեռքբերմանը և ավելի արդյունավետ կարգավորել դրա արտադրությունը:

- Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների վրա կատարվող տեսակարար ծախսերը՝ բարձր տեխնոլոգիական փոքր և միջին ձեռնարկություններում հաճախ գերազանցում են խոշոր ձեռնարկությունների համանման ցուցանիշները, որը նպաստում է նորամուծական շուկայում նրանց ավելի արագ ու արդյունավետ հայտնվելուն:
- Փոքր և միջին ձեռնարկությունների գյուտարարական խմբերը հաճախ աշխատում են այնպիսի ոլորտներում, որտեղ հետազոտողները արհեստավարժներ չեն, որը պայմանավորված է մարդկային ռեսուրսների սահմանափակությամբ: Խնդիրն այն է, որ փոքր և միջին ձեռնարկությունները հնարավորություն չունեն ներգրավել տարբեր ոլորտների բարձրորակ մասնագետներին: Հենց դա էլ հաճախ նպաստում է յուրօրինակ, առանձնահատուկ նորարարական գաղափարների առաջացմանը, խնդրի լուծման նոր մոտեցումների ձևավորմանը:

Փոքր նորամուծական ձեռնարկությունները, որպես կանոն, անցնում են մի քանի փուլերով:

Առաջին փուլում ինժեներների, հետազոտողների, մշակողների, գիտնականների խումբը հիմնադրում է ձեռնարկություն, որը նոր արտադրանք է արտադրում կամ արդեն յուրացրած արտադրանքն արտադրում է նոր տեխնոլոգիայով:

Սովորաբար, ձեռնարկությունների սկզբնական կապիտալը ձևավորվում է սեփական և փոխառու միջոցների հաշվին: Հաջորդ փուլում ձեռնարկության հիմնադիրների կողմից մշակվում է տնտեսական ռազմավարություն՝ շուկայական պահանջարկի, արտադրության նախապատրաստման, նոր արտադրանքի թողարկման և վաճառքի վերաբերյալ:

Երրորդ փուլում սկսվում է ստորաբաժանումների և կազմակերպական կառուցվածքի ձևավորման գործընթացը: Ըստ էության, այն արտադրանքի թողարկման սկիզբն է, որը նախատեսված է ոչ միայն կոնկրետ նեղ շրջանակի սպառողների, այլև համանման պահանջարկի ունեցողների համար:

Չորրորդ փուլում իրականացվում են նոր ներդրումներ, որոնք ուղղված են արտադրանքի որակի բարձրացմանը, թողարկվող արտադրանքի սպառողական շուկայի ընդլայնմանը: Այս պարագայում ձեռնարկության ռազմավարությունը արտադրության և սպառման ոլորտում որոշվում է սպառողների պահանջարկների և մրցակիցների համակողմանի ուսումնասիրության հիման վրա:

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում առանձնահատուկ տեղ են գրավում «վեճուրային» (ռիսկային) ձեռնարկությունները:

ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեության միջավայրը խիստ պասիվ է նորույթների ներգրավման հարցում: Այս ոլորտը չունի համապատասխան փորձ, որը կոչված է մտահոգացումը դարձնել շահույթ՝ հենվելով շուկայական կանոնների վրա: Փոքր և միջին ձեռնարկությունները հենց այն սուբյեկտներն են, որոնց միջոցով հնարավոր կլինի ապահովել գիտության, արտադրության և շուկայի կապը: Ձեռնարկատիրության այս ձևը գտնվում է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում:

Ձեռնարկատիրական ամբողջ դաշտի վրա էական ազդեցություն ունեն նորամուծական գործունեության կազմակերպման, կարգավորման խնդիրները: Տեխնոլոգիական նորամուծությունների իրացումը ՀՀ-ում մեծապես պայմանավորված է փոքր և միջին ձեռնարկություններում նորամուծական ակտիվության բարձրացմամբ: Այսպիսի ակտիվությունն արտահայտվում է հետևյալում՝

- հատկապես արդյունաբերության ոլորտում փոքր և միջին ձեռնարկությունների կողմից նոր տեխնոլոգիաների ներգրավման ռազմավարության որդեգրման մեջ,
- գիտահետազոտական ինստիտուտների և ձեռնարկությունների փոխգործունեությունը համալսարանների հետ,

- ձեռնարկության կառավարման ասպարեզում, հատկապես նորույթի շուկայացման հարցերում կտրուկ որակական փոփոխությունների իրականացման մեջ,
- ձեռնարկություններում մտավոր սեփականության օբյեկտների կառավարման ճկունության մեջ:

Այս բոլոր ուղղություններում անհրաժեշտ է պետական ակտիվ միջամտություն և աջակցություն:

Ներկայումս նորամուծությունների ոլորտում փոքր ձեռնարկությունը ձևավորվում է մի քանի ուղիներով: Այն կարող է առանձնաճանալ խոշոր պետական գիտական հաստատությունների կազմից, քանի որ ֆինանսավորումը մշտապես կրճատվում է, և նրանք չեն կարողանում հարմարվել նոր տնտեսական պայմաններին: Այս դեպքում փոքր ձեռնարկությունների գործունեությունը հիմնականում ուղղվում է մայր ձեռնարկությունում, հաստատությունում մշակված տեխնիկայի տարբեր տեսակների արդիականացմանը և կատարելագործմանը: ՓՆՁ-ները կարող են հանդես գալ որպես գիտահետազոտական ինստիտուտների և գործարանների շուկայական կրկնորդներ:

ՓՆՁ-ի ձևավորման մեկ այլ եղանակ է մշակողների խմբի միավորումը՝ մրցունակ և շահութաբեր գիտատար արտադրանքի թողարկման շրջանակներում, որոնց գործունեության ժամանակահատվածը հաճախ սահմանափակվում է որոշակի մտահղացման իրագործման տևողությամբ:

ՓՆՁ-ները կարող են ձևավորվել՝ որպես միջնորդներ նորամուծությունների և տեխնոլոգիաների առաջխաղացման համար, որոնք ստեղծվում են մասնագիտական որոշակի տեխնիկայի և տեխնոլոգիաների շուրջ: Այսպիսի ձեռնարկությունները ստեղծվում են հատկապես այն դեպքերում, երբ գիտատեխնիկական և մարքեթինգային կապերն ավելի թույլ են:

Նորամուծական ծրագրերի իրականացման գործընթացում կարևոր են պետական երաշխիքները, որոնք կարող են նպաստավոր պայմաններ ստեղծել փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման համար:

ՀՀ վարչապետ Տ. Սարգսյանի «Գլոբալ մտածողությունից՝ կոնկրետ գործողություններ» ելույթում առանձնացվում են փոքր և միջին ձեռնարկությունների զարգացումը խթանելու մի շարք ուղիներ, ինչպես օրինակ՝ մեծածավալ վարկային միջոցների հասանելիության ապահովում, հարկային վարչարարության էական պարզեցում, ազատ տնտեսական գոտիների հիմնում: Միջոցառումների այս շարքում կարևորվել է հետևյալը՝

«Կառավարությունն աջակցելու է բիզնես ծրագրերի մշակմանը և նախապատրաստմանը՝ հատկացնելով դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Վարչապետին կից ստեղծվելու է ինովացիոն նախագծերի հանձնաժողով, որի կողմից հայտարարվելու են բիզնես նախագծերի մրցույթներ»¹:

Ներկա փուլում նորամուծական գործունեության հիմնախնդիրների լուծման պետական քաղաքականության առանցքային ուղղություններից է տնտեսության մեջ նորամուծական ենթակառուցվածքի տարբեր տարրերի ձևավորումը, այդ ոլորտի միջազգային փորձի տեղայնացումը, նորամուծական ձեռնարկությունների կարգավիճակի օրենսդրական սահմանումը, «Վենչուրային հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի ընդունումը:

¹ Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 2008թ., նոյեմբերի 14: